ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/11

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից 25.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 25.01.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով ԿՈՇԿԵՂԵՆԻ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետնաև՝Աճուրդ):

Համաձայն Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել են այնպիսի խտրական պարամետրեր, որոնք համապատասխանում են բացառապես մեկ ընկերության արտադրանքի:

Հաշվի առնելով վերոնշված հանգամանքը՝ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն հարցում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարությանը, որով մասնավորապես նշել՝

«1. Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43 ծածկագով մրցույթի 1,2 չափաբաժիններում նշված կոշիկ ճտքավոր ГОСТ-447-91-ը վերաբերվում է քրոմային երկշերտ կաշվից անհատական պատվերով արտադրվող զինվորական կոշիկներին:

2. Ճտքերի, լեզվակի, երեսամասի և հետնամասի կաշիների հաստությունները տեխնիկական բնութագրում նշված է 1.2-2.00մմ ընդհանուր հաստությամբ, մինչդեռ զինվորական ճտքավոր կոշիկի արտադրության մեջ նախատեսված է՝ երեսամաս, հետնամաս-1.8-2.2մմ հաստությամբ կաշիներ, լեզվակ, ճտքեր-1.2-1.5մմ հաստությամբ կաշիներ:

3. Տեխնիկական բնութագրում նշված է, որ ներսի հանովի-դնովի ներդիրը՝ EVA նյութից, օրթոպեդիկ տեսակի՝ համալրված հակաբակտերիալ մշակմամբ աստառով, այնինչ օրթոպեդիկ ներդիրը ունի բժշկական նշանակություն, կիրառվում է բժշկության ոլորտում և արտադրվում է յուրաքանչյուր մարդու համար անհատապես՝ վերցված ոտքի հետքի հիման վրա և այն նախատեսված չէ մասսայական արտադրության համար:

4. Բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման դեպքում, նշված է՝ երեսամասի և ներսի ճտքի աստառները արտադրվում են բնական հումքից, անհրաժեշտ է շեշտել բնական հումքի թույլատրելի տեսակները և հատկանիշները, իսկ ձուլման եղանակով տակացուի ամրացման դեպքում Statex տիպի կամ համարժեք աստառային նյութից: Խնդրում ենք մեկնաբանել ինչ հատկանիշներ և ցուցանիշներ ունի Statex կոչվող նյութը:

5. Միջատակը բաղկացած է իրար սոսնձվող կարակցված բնական հումքից (պադոշ) և կոշիկի համար նախատեսված ստվարաթղթից, բացակայում են նշված նյութերի հաստությունները:

6. Բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման դեպքում խնդրում ենք պարզաբանել երկրորդ ներբանի անհրաժեշտությունը, քանի որ նշված ամրացման եղանակը չի ենթադրում երկրորդ բարակ ներբանի առկայությունը:

7. Ձուլման եղանակով տակացուի ամրացման դեպքում նշված չեն պիտակավորման և կրման ժամանակահատվածի պահանջները:

8. 6-րդ չափաբաժնում նշված է, որ կոշիկը պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն (շտիբլետ), ինչն անհրնարին է, քանի որ կոշիկի կառուցվածքում բացակայում են լեզվակը և կտրվածքներ, որոնց ամրացման համար է անհրաժեշտ ձգվող ժապավենը(շտիբլետը):

Վերը նշված խնդիրների վերաբերյալ խնդրում ենք տալ պարզաբանումներ և կատարել անհրաժեշտ փոփոխություններ 1, 2, 6 չափաբաժինների տեխնիկական բնութագրերում»:

Ի պատասխան վերոնշյալ հարցումներին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ստացվել է հետևյալ պարզաբանումները՝

«1-ին հարցադրման վերաբերյալ. 1-ին և 2-րդ չափաբաժիններում ԳՈՍՏ-ը վերաբերվում է նաև տվյալ չափաբաժիններում ներառված գնման առարկաներին,

2-րդ հարցադրման վերևաբերյալ. կաշվին ներկայացվող 1.2-ից 2 մմ հաստությամբ լինելու պահանջը ներառվել է ընդհանուր՝ հաշվի առնելով գնման առարկայի բաղկացուցիչ տարբեր մասերի համար պահանջվող կաշվի հաստությունները, իսկ յուրաքանչյուրի համար պահանջվող չափերը կարգավորվում են նորմատիվ փաստաթղթերով:

3-րդ հարցադրման վերաբերյալ. EVA օրթոպեդիկ բնութագրիչը ենթադրում է, որ գնման առարկայի ներդիրը պետք է ապահովի բարձր էլաստիկություն, առաձգականություն և ճկունություն:

4-րդ հարցադրման վերաբերյալ. Հայտնում եմ, որ բնական հումքն իրենից ներկայացնում է բնական կաշվից կամ վերջինիս հիմքով ստացված և կոշիկի արտադրությունում օգտագործվող բաղադրիչներ, statex նյութն իրենից ներկայացնում է խոնավադիմացկուն գործվածքից կտոր կամ արհեստական ցանցանման կտոր:

5-րդ հարցադրման վերաբերյալ. նշված նյութերի հաստությունները կանոնակարգված են գնման առարկային վերաբերվող նորմատիվ փաստաթղթերով:

6-րդ հարցի վերաբերյալ. երկրորդ ներբանի առկայության պահանջը պարտադիր է:

7-րդ հարցի վերաբերյալ. պիտակավորման և կրման ժամկետների վերաբերյալ պահանջը ընդհանուր են և վերաբերվում են նշված երկու եղանակով պատրաստման ենթակա գնման առարկաներին:

8-րդ հարցի վերաբերյալ. 6-րդ չափաբաժնում ներառված գնման առարկան ընդունելի է առանց կողերից ձգվող ժապավենի առկայության:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...:

Գտնում ենք, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլ. աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի վերոշարադրված պահանջների խախտում:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները՝ պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշմա«ն:

«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Ձեր վարույթում է քննվում «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/11 բողոքը, որի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ հիմնավորումները և նկատառումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4.Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով ԿՈՇԿԵՂԵՆԻ ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (այսուհետ՝ Աճուրդ) հրավերի «Տեխնիկական բնութագիր»-ը, ակնհայտ է դառնում, որ այն կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Մասնավորապես.

Չափաբաժին 1.2.–Կոշիկ ճտքավոր (զույգ)

Ըստ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի «Տեխնիկական բնութագիր»՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների համար միաժամանակ սահմանվել է հետևյալը՝

«Կոշիկ ճտքավոր (զույգ) ГОСТ 447-91: Բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, լեզվակից, փափուկ եզրակից, ամորտիզատորից: Տակացուն՝ համակցված ռետին և պոլիուրետան՝ ամրացված ձուլման կամ բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով:

Ընդ որում, ձուլման եղանակով տակացուի ամրացման դեպքում՝ կոշիկը արտադրվում է քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշվից, որը պետք է համապատասխանի ТУ 858-

5966-2007 նորմերին՝ տակացուի ամրացման ձուլման եղանակով: Կոշիկը արտադրվում է խուլ լեզվակով, որը ձիգ քուղավորման շնորհիվ պաշտպանում է ոտքը, ինչպես նաև խոչընդոտում է մանր քարերի, փոշու և ջրի ներթափանցմանը՝ կոշիկի ներսամաս: Հետնամասը արտադրվում է կլոր ամորտիզատորով, ինչը կոշիկը դարձնում է ավելի ճկուն: Կոշիկի բարձրությունը՝ 21–23սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներքին մասով ըստ միջին ուղղահայաց գծի, որն անցնում է եզրակի վերևից մինչև ներբանը՝ ներառյալ բորտը: Ճտքերը քուղավորվում են 8 կամ 9 զույգ մետաղական կոճականցքերով (կախված կոշիկի չափսից, թույլատրվում է նաև կեռիկների կիրառում), քիմիական մանրաթելից պատրաստված 3,5–5մմ տրամագծով և ոչ պակաս, քան 150սմ երկարությամբ քուղերով:

Կոշիկի վերնամասի դետալների հաստությունը և օգտագործվող նյութերը.

-ճտքերը, լեզվակը, երեսամասը և հետնամասը արտադրվում են 1,2–2,0մմ հաստության քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշվից, որը պետք է համապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին,

–հետնամասը՝ կոշտ, արտադրվում է 1,6-1,8մմ հաստության թերմոպլաստիկ նյութից;

-քթամասը՝ կոշտ, ամրացված, արտադրվում է 1,6–1,8մմ հաստության թերմոպլաստիկ նյութից;

-երեսամասի, ճտքերի և փափուկ եզրակի աստառները արտադրվում են Statex տիպի կամ համարժեք աստառային նյութից:

Կոշիկի տակացուն՝ երկշերտ համակցված: Երթային շերտը արտադրվում է մաշվածադիմացկուն ռետինից, միջանկյալ շերտը՝ պոլիուրետանից:

Տակացուի հաստությունը՝

- քթամասի հատվածում՝ ոչ պակաս, քան 7մմ;
- կրնկի հատվածում՝ ոչ պակաս, քան 21 մմ;
- ռետինե ներբանի հաստությունն առանց պրոտեկտորի՝ ոչ պակաս, քան 2մմ:

Հիմնական ներդիրը՝ կոշկային ստվարաթղթից, ամրացված ստվարաթղթե կիսաներդիրով և մետաղական սուպինատորով:

Կոշիկի ներսի հանովի-դնովի ներդիրը EVA նյութից օրթոպեդիկ տեսակի՝ համալրված հակաբակտերիալ մշակմամբ աստառով:

Երկտող կարի ամրության աստիճանը՝

-երեսամասը ճտքերի հետ՝ 135 Ն/սմ;

-հետնամասը և հետնամասի արտաքին գոտին ճտքերի հետ՝ 135 Ն/սմ:

Կոշիկի վերնամասի և տակացուի միացման ամրության աստիճանը՝ ոչ պակաս, քան 90 Ն/սմ:

Բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման դեպքում՝ կոշիկը արտադրվում է քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ, որը պետք էհամապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին՝ բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման եղանակով: Կոշիկը արտադրվում է խուլ լեզվակով: Հետնամասը արտադրվում է կլոր ամորտիզատորով, ինչը կոշիկը դարձնում է ավելի ճկուն:

Կոշիկի բարձրությունը՝ 21–23սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներքին մասով ըստ միջին ուղղահայաց գծի, որն անցնում է եզրակի վերևից մինչև ներբանը՝ ներառյալ բորտը: Ճտքերը քուղավորվում են 8 կամ 9 զույգ մետաղական կոճականցքերով (կախված կոշիկի չափսից; թույլատրվում է նաև կեռիկների կիրառում), քիմիական մանրաթելից պատրաստված 3,5–5մմ տրամագծով և ոչ պակաս, քան 150սմ երկարությամբ քուղերով: Կոշիկի վերնամասի դետալների հաստությունը և օգտագործվող նյութերը.

-ճտքերը, լեզվակը, երեսամասը և հետնամասը արտադրվում են 1,2–2,0մմ հաստության քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշվից, որը պետք է համապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին,

-հետնամասը կոշտ, արտադրվում է 1,6–1,8մմ հաստության թերմոպլաստիկ նյութից;

-քթամասը կոշտ, ամրացված, արտադրվում է 1,6–1,8մմ հաստության թերմոպլաստիկ նյութից,

-երեսամասի ներսի և ճտքերի աստառները արտադրվում են բնական հումքից:

Միջատակը բաղկացած է իրար սոսնձով կարակցված բնական հումքից /պադոշ/ և կոշիկի համար նախատեսված ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Ներբանը բաղկացած է երկու մասից /ներքին և արտաքին ներբաններից/:

Ներքին ներբանը պատրաստված է 2մմ հաստության, կոշտ, առաջնային ռետինե հումքից /ամրությունը ոչ պակաս 2 Н/mm/, որը երեսամասի և միջատակի հետ կարակցված է սոսնձման և կարման եղանակով: Արտաքին ներբանը պատրաստված է մաշվածակայուն. ցրտադիմացկուն, առաջնային ռետինե հումքից, երկայնական կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 6մմ:

Ներքին և արտաքին ներբանները իրար կարակցված են սոսնձման եղանակով բարձ ճշման տակ: Միջնապատը ներդրված բարձրավուն հարմարավետությամբ, համապատասխան հումքից:

Կոշիկի ներսի հանովի-դնովի ներդիրը EVA նյութից՝ մշակված հակաբակտերիալ աստառով: Երկտող կարի ամրության աստիճանը՝

-երեսամասը ճտքերի հետ՝ 135 Ն/սմ;

-հետնամասը և հետնամասի արտաքին գոտին ճտքերի հետ՝ 135 Ն/սմ:

Կոշիկի վերնամասի և տակացուի միացման ամրության աստիճանը՝ ոչ պակաս, քան 90 Ն/սմ:Արտադրողը (մատակարարը) պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար շահագործման ողջ ընթացքի համար (8 ամիս), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով:

Կոշիկի պիտակավորումը իրականացվում է ներսամասում ներկարված պիտակի միջոցով կամ ներսից դրոշմավորման եղանակով, որի վրա նշված են արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, կոշիկի չափսը:

Կոշիկի տակամասին պետք է նշված լինեն չափսը և արտադրողի ապրանքանշանը: Թույլատրված շեղումները՝ ըստ ГОСТ–ի:

Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու և հաստատելու համար; Փաթեթավորումը՝ հնգաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն: Արկղի մեջ 10-20 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը»:

Տեխնիկական բնութագիրով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար նախատեսված ապրանքի նկարագրում առկա են հետևյալ խնդիրները.

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Նախ, անհասկանալի պատճառով, մեկ միասնական տեխնիկական բնութագրում՝ մեկ չափաբաժնում, միավորվել են երկու միանգամայն տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող երկու տարբեր գնման առարկաներ՝ երկու տեսակի ճտքավոր կոշիկներ՝ ձուլման եղանակով տակացուի ամրացման և բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման ճտքավոր կոշիկներ, ընդ որում, ճտքավոր կոշիկների առանձնահատկությունները չեն ավարտվում միայն տակացուի ամրացման եղանակով, այլ տարբեր են կոշիկների բոլոր պարամետրերը: Ստացվում է, որ մեկ չափաբաժնում միավորվել են երկու միանգամայն տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ, ընդ որում, նման տարբերությունը առաջացնում է նաև ապրանքի գնի տարբերություն: Բացի այդ, հնարավոր է, որ մասնակցի մոտ առկա տեխնալոգիաները իրեն հնարավորություն տան արտադրել առաջին մասում նշված ճտքավոր կոշիկը, իսկ մյուսին՝ միայն երկրորդը: Վերոհիշյալը ուղղակիորեն հակասում է Օրենքի 25-րդ հոդվածի պահանջներին:

Նույն հիմնավորմամբ անհասկանալի կերպով նույն միասնական տեխնիկական բնութագիր ունեցող ճտքավոր կոշիկները բաժանվել են երկու տարբեր չափաբաժինների՝ 1-ին և 2-րդ: Մինչդեռ, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը արգելում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների:

1-ին և 2-րդ չափաբաժինների համար սահմանվել է «Կոշիկ ճտքավոր»՝ ГОСТ 447-91: Վերոհիշյալը նշանակում է, որ «Կոշիկ ճտքավոր»-ը պետք է համապատասխանի ГОСТ 447-91 պահանջներին: Մինչդեռ Հրավերի Տեխնիկական բնութագիրով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար նախատեսված ապրանքի նկարագրի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Հրավերով նախատեսված ապրանքի նկարագիրը չի համապատաս¬խանում ГОСТ 447-91-ով սահմանված պահանջներին: Այսպես.

ա) Նախ, մրցույթի 1,2 չափաբաժիններում նշված «Կոշիկ ճտքավոր»-ը ГОСТ 447-91-ով կոչվում է «Քրոմային երկշերտ կաշվից անհատական պատվերով արտադրվող զինվորական կոշիկ (երկարաճիտ, ճտքավոր և կարճաճիտ)»:

բ) Հրավերով «Ճտքավոր կոշիկի» համար նշվել է տակացուի ամրացման ձուլման կամ բարձր ճնշման սոսնձման եղանակով տակացուի ամրացում, բարձրություն՝ 21-23 սմ, մինչդեռ ГОСТ 447-91-ում, որպես ամրացման եղանակ նշված են հետևյալ ձևերը՝ արույրե մեխերով տակացուի ամրացում, ռանտային ամրացում և ռանտասոսնձման եղանակով տակացուի ամրացում, բոլոր չափսերը նշվում են մմ, բացի այդ, ամենաբարձր կոշիկի՝

երկարաճիտ կոշիկի համար սահմանված մաքսիմալ բարձությունը՝ 160մ է՝ 16 սմ, բայց ոչ տեխնիկական բնութագրում նշված՝ 21-23 սմ:

գ) Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ <Ճտքերի, լեզվակի, երեսամասի և հետնամասի կաշիների հաստությունները 1.2-2.00մմ>>, մինչդեռ նշված ГОСТ-ում նման ցուցանիշներ արտացոլված չեն: Հարկ եմ համարում նշել, որ զինվորական ճտքավոր կոշիկի արտադրության մեջ նախատեսված է՝ երեսամաս, հետնամաս-1.8-2.2մմ հաստությամբ, լեզվակ, ճտքեր-1.2-1.5մմ հաստությամբ կաշիներ:

Տեխնիկական բնութագրում նշված է քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշին պետք է համապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին, մինչդեռ նշված ТУ 858-5966-2007 հանդիսանում է «Русская кожа» ընկերության քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշվի արտադրության նորմ (ապացույցը կցվում է): Ուստի նշված «ТУ 858-5966-2007» հետ միաժամանակ Պատվիրատուի կողմից պետք է նշվեր «կամ համարժեք» բառերը՝ խտրական պահանջ չնախատեսելու և մրցակցությունը ապահովելու համար:

Հրավերում նախատեսված է հետևյալ վերացական արտահայտությունը՝ հետնամասը արտադրվում է կլոր ամորտիզատորով, ինչը կոշիկը դարձնում է ավելի ճկուն: Անհասկանալի է, թե «ավելի ճկուն» պահանջը ինչ չափանիշով պետք է գնահատել:

Հրավերում նախատեսված է, որ ճտքերը քուղավորվում են 8 կամ 9 զույգ մետաղական կոճականցքերով (կախված կոշիկի չափսից; թույլատրվում է նաև կեռիկների կիրառում): Անհասկանալի է, թե կոշիկի որ չափսից է թույլատրվում կոճականցքերի փոխարեն դնել կեռիկ (հրավերի նման պահանջի պայմաններում արտադրողը կարող է անգամ դնել զույգի մի կոշիկի վրա կոճականցք, իսկ մյուսի վրա՝ կեռիկ, քանզի արգելք չկա):

Տեխնիկական բնութագրում նշված է, որ, ներսի հանովի-դնովի ներդիրը՝ EVA նյութից, օրթոպեդիկ տեսակի՝ համալրված հակաբակտերիալ մշակմամբ աստառով, այն ինչ օրթոպեդիկ ներդիրը ունի բժշկական նշանակություն, կիրառվում է բժշկության ոլորտում և արտադրվում է յուրաքանչյուր մարդու համար անհատապես՝ վերցված ոտքի հետքի հիման վրա և այն նախատեսված չէ մասայական արտադրության համար: Ուստի նշված պահանջի փոխարեն պետք է նշվեր՝ անատոմիկ ներդիր:

Հրավերով նախատեսվել է, որ միջատակը բաղկացած է իրար սոսնձվող կարակցված բնական հումքից (պադոշ) և կոշիկի համար նախատեսված ստվարաթղթից: Նախ, անհասկանալի է, թե ինչ է իրենից ներկայացնում միջատակը: Բացի այդ, բացակայում են նշված նյութերի հաստությունները և ընդհանուր բնութագրերը: Մասանավորապես, նշված չէ պադոշի հաստությունը (մինչդեռ ГОСТ 447-91-ով հստակ սահմանվում է պադոշի

հաստություն), վերացական նշված է պադոշի նյութը՝ բնական հումք: Նման անորոշ, չսահմանված պահանջների դեպքում արտադրողը կարող է կոշիկը արտադրել ցանկացած հաստության և որակի պադոշից, ինչը էական նշանություն կունենա կոշիկի որակի և դիմացկունության, ինչպես նաև ինքարժեքի համար (կախված պադոշի հաստությունից՝ այդ դետալի գինը կարող է տատանվել մոտ 10 անգամ):

Հրավերով նշված է, որ երեսամասը միջատակի հետ կարակցված է սոսնձման և կարման եղանակով: Պետք է նշել, որ նշված կարացման եղանակը կարող է լինել բացառապես այն դեպքում, երբ կոշիկը ունի ռանտ, սակայն ողջ տեխնիկական բնութագրի մեջ նման պահանջ առկա չէ, մինչդեռ առանց ռանտի կոշիկի դեպքում կարակցումը սոսնձման և կարման եղանակով անհասկանալի պահանջ է՝ գոյություն ունեցող կոշիկի արտադրման տեխնոլոգիաների առումով:

Հրավերով սահմանված է, որ արտաքին ներբանը պատրաստված է առաջնային ռետինե հումքից, մինչդեռ անհասկանալի է, թե ինչ է նշանակում «առաջնային ռետինե հումք» հասկացությունը: Պետք է նշել, որ ГОСТ 447-91-ով հստակ սահմանված է ներբանի նյութը՝ կաուչուկ:

Հրավերով սահմանված է, որ արտաքին ներբանի երկայնական կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 6մմ, սակայն, որ հատվածից պետք է չափվի այդ հաստությունը՝ անհասկանալի է (արտաքին ներբանը ունի ռելյեֆ, և կախված ռելյեֆի կառուցվածքից՝ նրա տարբեր մասերը ունեն տարբեր հաստություններ):

Հրավերով սահմանված է անորոշ, վերացական հետևյալ պահանջ՝ միջնապատը ներդրված բարձրավուն հարմարավետությամբ, համապատասխան հումքից:

Բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման դեպքում, նշված է՝ երեսամասի և ներսի ճտքի աստառները արտադրվում են բնական հումքից, անհրաժեշտ է շեշտել բնական հումքի թույլատրելի տեսակները և հատկանիշները, իսկ ձուլման եղանակով տակացուի ամրացմանդեպքում՝ Statex տիպի կամ համարժեք աստառային նյութից:

Բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման դեպքում անհիմն և անհասկանալի է երկրորդ ներբանի անհրաժեշտությունը, քանի որ նշված ամրացման եղանակը չի ենթադրում երկրորդ բարակ ներբանի առկայություն:

Ձուլման եղանակով տակացուի ամրացման դեպքում նշված չեն պիտակավորման և կրման ժամանակահատվածի պահանջները:

Ըստ էության, բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման կոշիկի դեպքում նկարագրված չէ կոշիկի տակացուն, ինչպես դա արված է այլ ապրանքների նկարագրերում: Ստացվում է, որ այս տեսակի կոշիկը ընդհանրապես չունի տակացու:

Հրավերով նախատեսվել է երկտող կարի ամրության աստիճանը՝

-երեսամասը ճտքերի հետ՝ 135 Ն/սմ, հետնամասը և հետնամասի արտաքին գոտին ճտքերի հետ՝ 135 Ն/սմ, կոշիկի վերնամասի և տակացուի միացման ամրության աստիճանը՝ ոչ պակաս, քան 90 Ն/սմ:

Անհասկանալի է, թե նշված պահանջները որտեղից է վերցրած, ինչ հիմնավորմամբ, և ապրանքը հանձնելիս, ինչպես կարելի է այս պարամետրի առկայությունը ստուգել (ՀՀ-ում նման փորձաքննություն չի իրականացվում):

Հրավերի համաձայն՝ կոշիկի պիտակավորումը իրականացվում է ներսամասում ներկարված պիտակի միջոցով կամ ներսից դրոշմավորման եղանակով: Կոշիկի տակամասին պետք է նշված լինեն չափսը և արտադրողի ապրանքանշանը: Այստեղ հստակ սահմանված չէ, թե ներսամասի կամ տակացուի կոնկրետ որ մասում պետք է լինի այդ պիտակը կամ դրոշմը:

Հրավերով նախատեսված միևնույն չափաբաժնի մեջ միավորված ձուլման եղանակով տակացուի ամրացման և բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման ճտքավոր կոշիկների ներդիրների միջև առկա է էական տարբերություն, որը էականորեն ազդում է ապրանքի գնի վրա. ձուլման եղանակով տակացուի ամրացման կոշիկի համար նախատեսվել է պահանջ՝ օրթոպեդիկ ներդիր, իսկ բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման ճտքավոր կոշիկների դեպքում՝ սովորական ներդիր:

Բացակայում է պահանջ՝ «Լեզվակի վրա վերին հատվածում արտաքին երեսին պետք է դաջված /накат/ լինի «Արտադրված է ՊՆ կարիքների համար, վաճառքն արգելվում է» տեքստը», ինչը օրինակ պահանջվում է կանացի կոշիկների դեպքում (3-րդ չափաբաժին), ինչը մեղմ ասած, անհասկանալի է:

Հրավերին կցված չէ 1 և 2 չափաբաժիններով նախատեսված ապրանքի արտաքին տեսքի նկարը:

Բողոքը քննող անձի ուշադրությունն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ ГОСТ 447-91-ով սահմանված են կոշիկի բոլոր մասերի, դետալների նյութերին ներկայացվող պահանջները, ինչը բացակայում է տվյալ Հրավերում: Ավելին, նշված հրավերով կատարվել են էական շեղումներ ГОСТ 447-91-ի պահանջներից:

Բացի այդ, գտնում ենք, որ կոնկրետ նյութի տեսակ նշելիս, անհրաշետ է նաև նշել «կամ համարժեք» բառերը:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 3.Կոշիկ ճտքավոր կանացի (զույգ).

Ըստ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրով 3-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը՝

«ГОСТ 19137-89: Բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, տակամասից (տակացուից և կրունկից):

Արտադրվում է յուֆտե կաշվից: Կոշկերեսի երեսամասի և հետնամասի արտաքին գոտիները, լեզվակը և ճտքերը պետք է լինի 1,8մմ–ից 2,2 մմ հաստությամբ յուֆտե կաշվից, տակացուն և կրունկները՝ մաշվածադիմացկուն ռետինից: Տակացուն ներսամասի ստելկային ամրացվում է սոսնձման եղանակով: Կոշիկը՝ ունենում է մեկ հիմնական կաշվե միջադիր, որը երեսացուի հետ կարակցվում է կարման եղանակով: Կոշիկի ներսի հանովի-դնովի միջադիրը (ստելկա) 2,0մմ հաստության՝ մշակված անտիսեպտիկ շերտով: Լեզվակի վրա վերին հատվածում արտաքին երեսին պետք է դաջված /накат/ լինի կազմակերպության անվանումը և «Արտադրված է ՊՆ կարիքների համար, վաճառքն արգելվում է» տեքստը:

Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Կոշիկի ճտքերի վրա պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման (շահագործման) ամբողջ ժամանակահատվածի (8 ամիս) ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ հնգաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն: Արկղի մեջ 10-ից 20 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը»:

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված կոշկերեսի երեսամասի, հետնամասի և արտաքին գոտիների, լեզվակը և ճտքերի հաստությունը չի համապատասխանում ГОСТ 19137-89 պահանջներին, քանի որ, նշված ԳՕՍՏ-ում առկա են բոլոր դետալների հաստությունները, մասնավորապես՝ երեսամասի, հետնամասի հաստությունը 1.8-2.2մմ, արտաքին գոտիները, լեզվակը և ճտքերը 1.2-1.5մմ: Բացի այդ հրավերով սահմանված չեն միջատակի հումքի տեսակը և հատկանիշները, ինչը շատ կարևոր է կոշիկի որակական ցուցանիշների և ինքնարժեքի առումով:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Հստակ սահմանված չէ, թե ներսամասի կամ տակացուի կոնկրետ որ մասում պետք է լինի պիտակը կամ դրոշմը:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 4. Կոշիկ՝ քրոմե (զույգ).

Ըստ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի «Տեխնիկական բնութագիր»՝ 4-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը՝

«ГОСТ-447-91: Արտադրվում է խրոմե կաշվից, բաղկացած է վերնամասից, միջատակից, արտաքին ներբանից (ներբանից և կրունկից): Կրնկամասը՝ կոճերից ցածր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը, պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն (շտիբլետ):

Քթամասը՝ կոշտ: Կոշիկի վերնամասը հիմնական ներդիրի հետ կարակցվում է կարման եղանակով: Տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից:

Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը, ներսամասում նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն, արկղի մեջ մինչև 30 զույգ, տեսականին պետք է լինի ստվարաթղթե տուփի մեջ, մեկ տուփում՝ 1 զույգ: Արկղերի վրա պետք է տպագրված լինի

տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Շեղումները՝ ըստ ԳOUS-ի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, շահագործման 1 տարի ժամանակահատվածի ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով»:

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

ГOCT-447-91-ում նման բնութագիր ունեցող կոշիկի ցուցանիշներ արտացոլված չեն, քանի որ տվյալ ԳOUS-ը նախատեսված է երկարաճիտ, ճտքավոր և կիսաճտքավոր կոշիկների արտադրության համար:

Հրավերով նախատեսված է, որ կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդիրիր հետ կարման եղանակով, մինչդեռ նման տեխնոլոգիա գոյություն չունի և ակնհայտ անհասկանալի պահանջ է:

Տեխնիկական բութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որը էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի համար:

Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

Հրավերով սահմանված է, որ տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից է, սակայն բացակայում են «կամ համարժեք». բառերը:

Հստակ սահմանված չէ, թե ներսամասի կամ տակացուի կոնկրետ որ մասում պետք է լինի պիտակը կամ դրոշմը:

Այս չափաբաժնով սահմանվում է, որ փաթեթավորումը պետք է լինի եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մինչդեռ մյուս բոլոր չափաբաժիններով դրվել է հնգաշերտի պահանջ:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Շեղումները՝ ըստ ԳOUS-ի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, շահագործման 1 տարի ժամանակահատվածի ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով»:

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

ГOCT-447-91-ում նման բնութագիր ունեցող կոշիկի ցուցանիշներ արտացոլված չեն, քանի որ տվյալ ԳOUS-ը նախատեսված է երկարաճիտ, ճտքավոր և կիսաճտքավոր կոշիկների արտադրության համար:

Հրավերով նախատեսված է, որ կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդիրիր հետ կարման եղանակով, մինչդեռ նման տեխնոլոգիա գոյություն չունի և ակնհայտ անհասկանալի պահանջ է:

Տեխնիկական բութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որը էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի համար:

Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

Հրավերով սահմանված է, որ տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից է, սակայն բացակայում են «կամ համարժեք». բառերը:

Հստակ սահմանված չէ, թե ներսամասի կամ տակացուի կոնկրետ որ մասում պետք է լինի պիտակը կամ դրոշմը:

Այս չափաբաժնով սահմանվում է, որ փաթեթավորումը պետք է լինի եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մինչդեռ մյուս բոլոր չափաբաժիններով դրվել է հնգաշերտի պահանջ:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 5. Կոշիկ՝ կարճաճիտ խրոմե /զույգ.

Ըստ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի «Տեխնիկական բնութագիր»՝ 5-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը.

«ГОСТ-447-91: Արտադրվում է խրոմե կաշվից, բաղկացած է վերնամասից, ճտքերից, միջատակից, արտաքին ներբանից (ներբանից և կրունկից):

Նախապատրաստվածքը՝ կոճերից ոչ բարձր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը, պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն (շտիբլետ): Կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդիրի հետ կարման եղանակով: Տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից:

Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը, ներսամասում նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն, արկղի մեջ մինչև 30 զույգ, տեսականին պետք է լինի ստվարաթղթե տուփի մեջ, մեկ տուփում՝ 1 զույգ: Արկղերի վրա պետք է տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, շահագործման 1 տարի ժամանակահատվածի ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով»:

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Հրավերով նախատեսված է, որ կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդիրիր հետ կարման եղանակով, մինչդեռ նման տեխնոլոգիա գոյություն չունի և ակնհայտ անհասկանալի պահանջ է:

Տեխնիկական բնութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որը էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի առումով:

Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

Հրավերով սահմանված է, որ տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից է, սակայն բացակայում է «համարժեք» բառը:

Հստակ սահմանված չէ, թե ներսամասի կամ տակացուի կոնկրետ որ մասում պետք է լինի պիտակը կամ դրոշմը:

Բացառապես այս չափաբաժնով սահմանվում է, որ փաթեթավորումը պետք է լինի եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մինչդեռ մյուս բոլոր չափաբաժիններով դրվել է հնգաշերտի պահանջ:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 6. Կոշիկ՝ խրոմե կանացի (զույգ).

Ըստ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի «Տեխնիկական բնութագիր»՝ 6-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը.

«Համաձայն հաստատված նմուշի՝ երեսացուն բնական խրոմից: Արտադրվում է խրոմե կաշվից, բաղկացած է վերնամասից, միջատակից, արտաքին ներբանից (ներբանից և կրունկից): Կրունկամասը՝ կոճերից ցածր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը, պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն (շտիբլետ): Կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդրի հետ: Տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից:

Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը, ներսամասում նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն, արկղի մեջ մինչև 20 զույգ, տեսականին պետք է լինի

ստվարաթղթե տուփի մեջ, մեկ տափում՝ 1 զույգ: Արկղերի վրա պետք է տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, շահագործման ժամանակահատվածի ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով»:

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

Հրավերով սահմանված է, որ տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից է, սակայն բացակայում է «կամ համարժեք» բառերը:

Հրավերով նշված է, որ կոշիկը պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն (շտիբլետ), ինչն անհրաժեշտ է, քանի որ կոշիկի կառուցվածքում բացակայում են լեզվակը և կտրվածքներ, որոնց ամրացման համար է անհրաժեշտ ձգվող ժապավենը (շտիբլետը):

Հստակ սահմանված չէ, թե ներսամասի կամ տակացուի կոնկրետ որ մասում պետք է լինի պիտակը կամ դրոշմը:

Բացառապես այս չափաբաժնով սահմանվում է, որ փաթեթավորումը պետք է լինի եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մինչդեռ մյուս բոլոր չափաբաժիններով դրվել է հնգաշերտի պահանջ:

Տեխնիկական բնութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որը էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի առումով:

Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 7. Հոդաթափ՝ զորանոցային (զույգ).

Ըստ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրով՝ 7-րդ չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը՝

«Արտադրվում է էթիլեն վինիլ ացետատից (EVA) կամ համարժեք հումքից, երեսամասը և տակամասն ամբողջական, միաձույլ: Տակամասի հաստությունը առաջամասում 14–16 մմ, կրնկամասում 22-24 մմ: Երեսամասը եռաժապավեն կտրվածքով, կողքերից օդափոխիչ անցքերով: Երեսամասի երկարությունը 13-14սմ, երեսամասի կենտրոնում 7-8սմ երկարությամբ, 3,4-3,8 սմ լայնությամբ առանց անցքերի գոտի: Երեսամասը պետք է տեղակայվի հոդաթափի քթամասից 5,3-5,7 սմ հեռավորության վրա: Արտադրվում է 39-46 չափսերի: Հողաթափը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջպետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ պարկերով, պարկի մեջ մինչև 60 զույգ, պարկերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%»:

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Հստակ սահմանված չէ, թե ներսամասի կամ տակացուի կոնկրետ որ մասում պետք է լինի դրոշմը:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Հրավերով սահմանված է, որ հողաթափը արտադրվում է 39-46 չափսերի, սակայն հետագայում չափսերի սանդղակով չափսերը նշված են զույգերով՝ 39-40, 41-42, 43-44, 45-46: Նշված պահանջը կարող է թյուրիմացության մեջ գցել արտադրող ընկերությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ EVA նյութից արտադրված հողաթափերի շուկան շատ բազմազան է, անհրաժեշտ էր, որպեսզի ընդհանուր նկարագրի վերջում նշվեր «կամ համարժեք» բառերը:

Չկա գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի

3-րդ և 13-րդ հոդվածների պահանջների խախտմամբ, ուստի գնումների կետ կապված բողոքը քննող անձին կրկին խնդրում եմ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հարություն Մանուչարյանը, Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից 25.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 11.02.2019թ. թիվ ԴՎԱ/534 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից 25.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով ներկայացված հարցադրումներին ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայացնում է հետևյալ դիրքորոշումը.

«1-ին հարցադրման վերաբերյալ. 1-ին և 2-րդ չափաբաժիններում ԳՈՍՏ-ը վերաբերվում է անհատական պատվերով զինվորական կոշկեղենին և հաշվի առնելով գնման առարկայի առանձնահատկությունները, վերջինիս ներառումը նպատակ է ունեցել կանոնակարգել գնման առարկայի բնութագրիչ հանդիսացող, սակայն տեխնիկական բնութագրում չներառված մյուս բնութագրիչ ցուցանիշները:

2-րդ հարցադրման վերևաբերյալ. կաշվին ներկայացվող 1.2-ից 2 մմ հաստությամբ լինելու պահանջը ներառվել է ընդհանուր՝ հաշվի առնելով գնման առարկայի բաղկացուցիչ տարբեր մասերի համար պահանջվող կաշվի հաստությունները, իսկ յուրաքանչյուրի համար պահանջվող չափերը կարգավորվում են նորմատիվ փաստաթղթերով:

3-րդ հարցադրման վերաբերյալ. EVA օրթոպեդիկ բնութագրիչը ենթադրում է, որ գնման առարկայի ներդիրը պետք է ապահովի բարձր էլաստիկություն, առաձգականություն և ճկունություն, բացի այդ, տեխնիկական բնութագրում օգտագործված է ոչ թե «օրթոպեդիկ

ներդիր» արտահայտությունը, այլ նշված է, որ ներդիրը պետք է լինի օրթոպեդիկ տեսակի, այսինքն, կոշիկը կրելուց պետք է ընդունի ոտքի անատոմիական ձևը:

4-րդ հարցադրման վերաբերյալ. բնական հումքն իրենից ներկայացնում է բնական կաշվից կամ վերջինիս հիմքով ստացված և կոշիկի արտադրությունում օգտագործվող բաղադրիչներ, statex նյութն իրենից ներկայացնում է խոնավադիմացկուն գործվածքից կտոր կամ արհեստական ցանցանման կտոր, բացի այդ հրավերում նշվել է նաև «կամ համարժեք նյութից» արտահայտությունը և պարտադիր չէ հիմք ընդունել միայն statex մակնշումը:

5-րդ հարցադրման վերաբերյալ. Տեսականորեն, եթե պատվիրատուի կողմից նշված չէ գնման առարկային վերաբերող որևէ չափ, ապա մատակարարին ըստ էության հնարավորություն է տալիս մատակարարել իրեն հարմար ցանկացած չափսի ապրանք, նշված նյութերի հաստությունները կանոնակարգված են գնման առարկային վերաբերվող նորմատիվ փաստաթղթերով,

6-րդ հարցադրման վերաբերյալ. երկրորդ ներբանի առկայության պահանջը պարտադիր պայման է,

7-րդ հարցի վերաբերյալ. պիտակավորման և կրման ժամկետների վերաբերյալ պահանջները ընդհանուր են և վերաբերվում են նշված երկու եղանակով պատրաստման ենթակա գնման առարկաներին,

8-րդ հարցի վերաբերյալ. 6-րդ չափաբաժնում ներառված գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված կողերից ձգվող ժապավենի առկայության պահանջը ներառվել է պատասխանատու ստորաբաժանման վրիպակի արդյունքում և ընդունելի է առանց տվյալ պահանջի»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Ուստյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/11 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից 25.01.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու)

«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից 11.02.2019թ. թիվ ԴՎԱ/534 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կոշկեղենի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են հետևյալ հատկանիշները»

Չափաբաժին 1,2. Կոշիկ ճտքավոր (զույգ).

«Կոշիկ ճտքավոր (զույգ) ГОСТ 447-91: Բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, լեզվակից, փափուկ եզրակից, ամորտիզատորից: Տակացուն՝ համակցված ռետին և պոլիուրետան՝ ամրացված ձուլման կամ բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով:

Ընդ որում, ձուլման եղանակով տակացուի ամրացման դեպքում՝ կոշիկը արտադրվում է քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ՝ կաշվից, որը պետք է համապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին՝ տակացուի ամրացման ձուլման եղանակով: Կոշիկը արտադրվում է խուլ լեզվակով, որը ձիգ քուղավորման շնորհիվ պաշտպանում է ոտքը, ինչպես նաև խոչընդոտում է մանր քարերի, փոշու և ջրի ներթափանցմանը՝ կոշիկի ներսամաս: Հետնամասը արտադրվում է կլոր ամորտիզատորով, ինչը կոշիկը դարձնում է ավելի ճկուն:Կոշիկի բարձրությունը՝ 21–23սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներքին մասով ըստ միջին ուղղահայաց գծի, որն անցնում է եզրակի վերևից մինչև ներբանը՝ ներառյալ բորտը: Ճտքերը քուղավորվում են 8 կամ 9 զույգ մետաղական կոճականցքերով (կախված կոշիկի չափսից, թույլատրվում է նաև կեռիկների կիրառում), քիմիական մանրաթելից պատրաստված 3,5–5մմ տրամագծով և ոչ պակաս, քան 150սմ երկարությամբ քուղերով:

Կոշիկի վերնամասի դետալների հաստությունը և օգտագործվող նյութերը.

-ճտքերը, լեզվակը, երեսամասը և հետնամասը արտադրվում են 1,2–2,0մմ հաստության քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշվից, որը պետք է համապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին,

–հետնամասը՝ կոշտ, արտադրվում է 1,6-1,8մմ հաստության թերմոպլաստիկ նյութից;

-քթամասը՝ կոշտ, ամրացված, արտադրվում է 1,6–1,8մմ հաստության թերմոպլաստիկ նյութից;

-երեսամասի, ճտքերի և փափուկ եզրակի աստառները արտադրվում են Statex տիպի կամ համարժեք աստառային նյութից:

Կոշիկի տակացուն՝ երկշերտ համակցված: Երթային շերտը արտադրվում է մաշվածադիմացկուն ռետինից, միջանկյալ շերտը՝ պոլիուրետանից:

Տակացուի հաստությունը՝

- քթամասի հատվածում՝ ոչ պակաս, քան 7մմ;
- կրնկի հատվածում՝ ոչ պակաս, քան 21 մմ;
- ռետինե ներբանի հաստությունն առանց պրոտեկտորի՝ ոչ պակաս, քան 2մմ:

Հիմնական ներդիրը՝ կոշկային ստվարաթղթից, ամրացված ստվարաթղթե կիսաներդիրով և մետաղական սուպինատորով:

Կոշիկի ներսի հանովի-դնովի ներդիրը EVA նյութից օրթոպեդիկ տեսակի՝ համալրված հակաբակտերիալ մշակմամբ աստառով:

Երկտող կարի ամրության աստիճանը՝

-երեսամասը ճտքերի հետ՝ 135 Ն/սմ;

-հետնամասը և հետնամասի արտաքին գոտին ճտքերի հետ՝ 135 Ն/սմ:

Կոշիկի վերնամասի և տակացուի միացման ամրության աստիճանը՝ ոչ պակաս, քան 90 Ն/սմ:

Բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման դեպքում՝ կոշիկը արտադրվում է քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ, որը պետք էհամապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին՝ բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման եղանակով: Կոշիկը արտադրվում է խուլ լեզվակով: Հետնամասը արտադրվում է կլոր ամորտիզատորով, ինչը կոշիկը դարձնում է ավելի ճկուն:

Կոշիկի բարձրությունը՝ 21–23սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներքին մասով ըստ միջին ուղղահայաց գծի, որն անցնում է եզրակի վերևից մինչև ներբանը՝ ներառյալ բորտը: Ճտքերը քուղավորվում են 8 կամ 9 զույգ մետաղական կոճականցքերով (կախված կոշիկի չափսից; թույլատրվում է նաև կեռիկների կիրառում), քիմիական մանրաթելից պատրաստված 3,5–5մմ տրամագծով և ոչ պակաս, քան 150սմ երկարությամբ քուղերով: Կոշիկի վերնամասի դետալների հաստությունը և օգտագործվող նյութերը.

-ճտքերը, լեզվակը, երեսամասը և հետնամասը արտադրվում են 1,2–2,0մմ հաստության քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշվից, որը պետք է համապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին,

-հետնամասը կոշտ, արտադրվում է 1,6–1,8մմ հաստության թերմոպլաստիկ նյութից;

-քթամասը կոշտ, ամրացված, արտադրվում է 1,6–1,8մմ հաստության թերմոպլաստիկ նյութից,

-երեսամասի ներսի և ճտքերի աստառները արտադրվում են բնական հումքից:

Միջատակը բաղկացած է իրար սոսնձով կարակցված բնական հումքից /պադոշ/ և կոշիկի համար նախատեսված ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Ներբանը բաղկացած է երկու մասից /ներքին և արտաքին ներբաններից/:

Ներքին ներբանը պատրաստված է 2մմ հաստության, կոշտ, առաջնային ռետինե հումքից /ամրությունը ոչ պակաս 2 Н/mm/, որը երեսամասի և միջատակի հետ կարակցված է սոսնձման և կարման եղանակով: Արտաքին ներբանը պատրաստված է մաշվածակայուն. ցրտադիմացկուն, առաջնային ռետինե հումքից, երկայնական կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 6մմ:

Ներքին և արտաքին ներբանները իրար կարակցված են սոսնձման եղանակով բարձ ճշման տակ: Միջնապատը ներդրված բարձրավուն հարմարավետությամբ, համապատասխան հումքից:

Կոշիկի ներսի հանովի-դնովի ներդիրը EVA նյութից՝ մշակված հակաբակտերիալ աստառով:Երկտող կարի ամրության աստիճանը՝

-երեսամասը ճտքերի հետ՝ 135 Ն/սմ;

-հետնամասը և հետնամասի արտաքին գոտին ճտքերի հետ՝ 135 Ն/սմ:

Կոշիկի վերնամասի և տակացուի միացման ամրության աստիճանը՝ ոչ պակաս, քան 90 Ն/սմ: Արտադրողը (մատակարարը) պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար շահագործման ողջ ընթացքի համար (8 ամիս), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով:

Կոշիկի պիտակավորումը իրականացվում է ներսամասում ներկարված պիտակի միջոցով կամ ներսից դրոշմավորման եղանակով, որի վրա նշված են արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, կոշիկի չափը:

Կոշիկի տակամասին պետք է նշված լինեն չափը և արտադրողի ապրանքանշանը: Թույլատրված շեղումները՝ ըստ ГОСТ–ի:

Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու և հաստատելու համար; Փաթեթավորումը՝ հնգաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն: Արկղի մեջ 10-20 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը»:

Չափաբաժին 3. Կոշիկ ճտքավոր կանացի (զույգ).

«ГОСТ 19137-89: Բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, տակամասից (տակացուից և կրունկից):

Արտադրվում է յուֆտե կաշվից: Կոշկերեսի երեսամասի և հետնամասի արտաքին գոտիները, լեզվակը և ճտքերը պետք է լինի 1,8մմ–ից 2,2 մմ հաստությամբ յուֆտե կաշվից, տակացուն և կրունկները՝ մաշվածադիմացկուն ռետինից: Տակացուն ներսամասի ստելկային ամրացվում է սոսնձման եղանակով: Կոշիկը՝ ունենում է մեկ հիմնական կաշվե միջադիր, որը երեսացուի հետ կարակցվում է կարման եղանակով: Կոշիկի ներսի հանովի-դնովի միջադիրը (ստելկա) 2,0մմ հաստության՝ մշակված անտիսեպտիկ շերտով: Լեզվակի վրա վերին հատվածում արտաքին երեսին պետք է դաջված /накат/ լինի կազմակերպության անվանումը և «Արտադրված է ՊՆ կարիքների համար, վաճառքն արգելվում է» տեքստը: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Կոշիկի ճտքերի վրա պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման (շահագործման) ամբողջ ժամանակահատվածի (8 ամիս) ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ հնգաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն: Արկղի մեջ 10-ից 20 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Չափաբաժին 4. Կոշիկ՝ քրոմե (զույգ).

«ГОСТ-447-91: Արտադրվում է խրոմե կաշվից, բաղկացած է վերնամասից, միջատակից, արտաքին ներբանից (ներբանից և կրունկից): Կրնկամասը՝ կոճերից ցածր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը, պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն (շտիբլետ):

Քթամասը՝ կոշտ: Կոշիկի վերնամասը հիմնական ներդիրի հետ կարակցվում է կարման եղանակով: Տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից:

Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը, ներսամասում նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն, արկղի մեջ մինչև 30 զույգ, տեսականին պետք է լինի ստվարաթղթե տուփի մեջ, մեկ տուփում՝ 1 զույգ: Արկղերի վրա պետք է տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ԳՕՍ-ի:

Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, շահագործման 1 տարի ժամանակահատվածի ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով»:

Չափաբաժին 5. Կոշիկ՝ կարճաճիտ խրոմե/զույգ.

«ГОСТ-447-91: Արտադրվում է խրոմե կաշվից, բաղկացած է վերնամասից, ճտքերից, միջատակից, արտաքին ներբանից (ներբանից և կրունկից):

Նախապատրաստվածքը՝ կոճերից ոչ բարձր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը, պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն (շտիբլետ): Կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդիրի հետ կարման եղանակով: Տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից:

Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը, ներսամասում նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն, արկղի մեջ մինչև 30 զույգ, տեսականին պետք է լինի ստվարաթղթե տուփի մեջ, մեկ տուփում՝ 1 զույգ: Արկղերի վրա պետք է տպագրված լինի

տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, շահագործման 1 տարի ժամանակահատվածի ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով»:

Չափաբաժին 6. Կոշիկ՝ խրոմե կանացի (զույգ).

Համաձայն հաստատված նմուշի՝ երեսացուն բնական խրոմից: Արտադրվում է խրոմե կաշվից, բաղկացած է վերնամասից, միջատակից, արտաքին ներբանից (ներբանից և կրունկից): Կրունկամասը՝ կոճերից ցածր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը, պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն (շտիբլետ): Կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդրի հետ: Տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից:

Կոշիկը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը, ներսամասում նշված լինի արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն, արկղի մեջ մինչև 20 զույգ, տեսականին պետք է լինի ստվարաթղթե տուփի մեջ, մեկ տափում՝ 1 զույգ: Արկղերի վրա պետք է տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, շահագործման ժամանակահատվածի ընթացքում, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը տասնօրյա ժամկետում անհատույց փոխարինել նորերով»:

Չափաբաժին 7.Հողաթափ՝ զորանոցային (զույգ).

«Արտադրվում է էթիլեն վինիլ ացետատից (EVA) կամ համարժեք հումքից, երեսամասը և տակամասն ամբողջական, միաձույլ: Տակամասի հաստությունը առաջամասում 14–16 մմ, կրնկամասում 22-24 մմ: Երեսամասը եռաժապավեն կտրվածքով, կողքերից օդափոխիչ անցքերով: Երեսամասի երկարությունը 13-14սմ, երեսամասի կենտրոնում 7-8 սմ

երկարությամբ, 3,4-3,8 սմ լայնությամբ առանց անցքերի գոտի: Երեսամասը պետք է տեղակայվի հոդաթափի քթամասից 5,3-5,7 սմ հեռավորության վրա: Արտադրվում է 39-46 չափսերի: Հողաթափը՝ տակամասում պետք է ունենա դրոշմ, դրոշմի վրա պետք նշված լինի չափսը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջպետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

Փաթեթավորումը՝ պարկերով, պարկի մեջ մինչև 60 զույգ, պարկերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%»:

«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Աճուրդի գնման առարկայի 1-ից 7-րդ չափաբաժինների մասով Պատվիրատուի կողմից սահմանվել են ձեռքբերվող ապրանքի այնպիսի տվյալներ և պայմաններ, որոնք չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին, մասնավորապես, պարունակում են այնպիսի խտրական պարամետրեր, որոնք համապատասխանում են բացառապես մեկ ընկերության արտադրանքի:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումն ամբողջությամբ:

Բողոքաբերը՝ անդրադառնալով ՀՀ ՊՆ-ի կողմից Բողոքի վերաբերյալ 11.02.2019թ. թիվ ԴՎԱ/534 գրությամբ հայտնած դիրքորոշմանը, ներկայացրել է հետևյալ առարկությունները.

«1-ին հարցադրման մասով.

Գրությամբ նշվել է, որ 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված ԳՕՍՏ-ը վերաբերվում է անհատական պատվերով զինվորական կոշկեղենին և հաշվի առնելով գնման առարկայի առանձնահատկությունները, վերջինիս ներառումը նպատակ է ունեցել կանոնակարգել գնման առարկայի բնութագրիչ հանդիսացող, սակայն տեխնիկական բնութագրում չներառված մյուս բնութագրիչ ցուցանիշները:

Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ Հրավերով նախատեսված ապրանքի նկարագիրը չի համապատասխանում նույն Հրավերով ամրագրված ГОСТ 447-91-ով սահմանված պահանջներին: Մասնավորապես, Հրավերով ճտքավոր կոշիկի համար նշվել է տակացուի ամրացման ձուլման կամ բարձր ճնշման սոսնձման եղանակով տակացուի

ամրացում, բարձրություն՝ 21-23 սմ, մինչդեռ ГОСТ 447-91-ում, որպես ամրացման եղանակ նշված են հետևյալ ձևերը՝ արույրե մեխերով տակացուի ամրացում, ռանտային ամրացում և ռանտասոսնձման եղանակով տակացուի ամրացում, բոլոր չափսերը նշվում են մմ, բացի այդ, ամենաբարձր կոշիկի՝ երկարաճիտ կոշիկի համար սահմանված մաքսիմալ բարձությունը՝ 160մ է՝ 16 սմ, բայց ոչ տեխնիկական բնութագրում նշված՝ 21-23 սմ:

Գտնում ենք, որ Պատվիրատուն Հրավերը կազմելիս, նույն հատվածում ներառել է երկու իրար հակասող պահանջներ՝ ապրանքի համապատասխանությունը՝ ГОСТ 447-91-ին և միևնույն ժամանակ ГОСТ 447-91-ից ակնհայտ տարբերվող մի շարք պահանջներ:

2-րդ հարցադրման մասով.

ՀՀ ՊՆ-ի գրության համաձայն՝ կաշվին ներկայացվող 1,2-ից 2 մմ հաստությամբ լինելու պահանջը տեխնիկական բնութագրում նշվել է ընդհանուր՝ հաշվի առնելով գնման առարկայի բաղկացուցիչ տարբեր մասերի համար պահանջվող կաշվի հաստությունները և չի նշվել առանձին դետալների համար, իսկ յուրաքանչյուր դետալի համար սահմանված չափսերը կանոնակարգվում են նորմատիվ փաստաթղթերով:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ ճտքերի, լեզվակի, երեսամասի և հետնամասի կաշիների հաստությունները 1.2-2.00մմ, մինչդեռ նշված ГОСТ-ում նման ցուցանիշներ արտացոլված չեն:

Մասնավորապես, ГОСТ 447-91-ի, այսինքն ՀՀ ՊՆ-ի կողմից մատնանշված նորմատիվ փաստաթղթի, ուսումնասիրությունը ցույց է տալիս (Հավելված 1, աղյուսակ 10, կցվում է), որ տարբեր հատվածի կաշիների, կոշիկի տարբեր դետալների հաստությունները տատանվում է 06-ից մինչը 1.6 մմ, ինչը հերթական անգամ ապացուցում է, որ նույն չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագրում պարունակվում են իրար հակասող պարամետրեր:

3-րդ հարցադրման մասով.

Ըստ գրության՝ օրթոպեդիկ բնութագրիչը ենթադրում է, որ գնման առարկայի ներդիրը պետք է ապահովի բարձր էլաստիկություն, առաձգականություն և ճկունություն, բացի այդ, տեխնիկական բնութագրում օգտագործված է ոչ թե «օրթոպեդիկ ներդիր» արտահայտությունը, այլ նշված է, որ ներդիրը պետք է լինի օրթոպեդիկ տեսակի, այսինքն՝ կոշիկը կրելուց պետք է ընդունի ոտքի անատոմիական ձևը:

ՀՀ ՊՆ-ի դիրքորոշումից ակնհայտ է դառնում, որ ոտքի անատոմիական ձևը կարող է ունենալ անատոմիկ տեսակի ներդիրը, ուստի տեխնիկական բնութագրում նշված օրթոպեդիկ տեսակի ներդիրի փոխարեն պետք է նշվի անատոմիկ տեսակի ներդիր:

4-րդ հարցադրման մասով.

Ըստ գրության՝ բնական հումքն իրենից ներկայացնում է բնական կաշվից կամ վերջինիս հիմքով ստացված և կոշիկի արտադրությունում օգտագործվող բաղադրիչներ, statex նյութն իրենից ներկայացնում է խոնավադիմացկուն գործվածքից կտոր կամ արհեստական ցանցանման կտոր, բացի այդ հրավերում նշվել է նաև «կամ համարժեք նյութից» արտահայտությունը և պարտադիր չէ հիմք ընդունել միայն statex մակնշումը:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ այստեղ մեր կողմից բարձրացվել է խնդիր, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների համար միևնույն տեխնիկական բնութագրում բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման կոշիկի դեպքում պահանջվել է, որպեսզի երեսամասի և ներսի ճտքի աստառները արտադրվեն բնական հումքից, իսկ ձուլման եղանակով տակացուի ամրացման կոշիկի դեպքում՝ Statex տիպի կամ համարժեք աստառային նյութից, որը ըստ Պատվիրատուի կարող է լինել նաև ցանկացած արհեստական կտոր, ինչը էական նշանություն կունենա կոշիկի որակի, ինչպես նաև ինքարժեքի համար (կախված աստառի կտորի տեսակից՝ բնական, թե արհեստական, այդ դետալի գինը կարող է տատանվել մի քանի անգամ): Ստացվում է, որ նույն չափաբաժնով պահանջվում են տարբեր ինքնարժեքներ ունեցող կոշիկներ:

5-րդ հարցադրման մասով.

Ըստ գրության՝ տեսականորեն, եթե պատվիրատուի կողմից նշված չէ գնման առարկային վերաբերվող որևէ չափ, ապա դա մատակարարին, ըստ էության, հնարավորություն է տափս մատակարարել իրեն հարմար ցանկացած չափսի ապրանք, այնուամենայինիվ, նշված նյութերի հաստությունները կանոնակարգված են գնման առարկային վերաբերվող նորմատիվ փաստաթղթերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա...:

Փաստորեն, ըստ ՀՀ ՊՆ-ի, իրենց կողմից սահմանված տեխնիկական բնութագրի պայմաններում մատակարարարը կարող է մատակարարել իրեն հարմար ցանկացած չափսի ապրանք, քանի որ հստակ չափսեր Հրավերով սահմանված չեն: Միևնույն ժամանակ տվյալ դեպքում հնարավոր չէ հղում կատարել նորմատիվ փաստաթղթի վրա, քանզի Հրավերի 1,2 չափաբաժնով պահանջված կոշիկի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում նորմատիվ փաստաթղթերում նկարագրված կոշիկին:

7-րդ հարցադրման մասով.

Ըստ Գրության՝ պիտակավորման և կրման ժամկետների վերաբերյալ պահանջները եղել են ընդհանուր՝ վերաբերվել են նշված երկու եղանակով պատրաստման ենթակա գնման առարկաներին, սույն հարցի մասով նույնպես տրվել է հստակ պարզաբանում:

Մինչդեռ, այստեղ առկա է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտում, մասնավորապես.

Հրավերի համաձայն՝ կոշիկի պիտակավորումը իրականացվում է ներսամասում ներկարված պիտակի միջոցով կամ ներսից դրոշմավորման եղանակով: Կոշիկի տակամասին պետք է նշված լինեն չափսը և արտադրողի ապրանքանշանը: Այստեղ հստակ սահմանված չէ, թե ներսամասի կամ տակացուի կոնկրետ որ մասում պետք է լինի այդ պիտակը կամ դրոշմը:

Բացակայում է պահանջ՝ «Լեզվակի վրա վերին հատվածում արտաքին երեսին պետք է դաջված /накат/ լինի «Արտադրված է ՊՆ կարիքների համար, վաճառքն արգելվում է» տեքստը», ինչը օրինակ պահանջվում է կանացի կոշիկների դեպքում (3-րդ չափաբաժին), ինչը մեղմ ասած, անհասկանալի է:

8-րդ հարցադրման մասով.

Ըստ գրության՝ 6-րդ չափաբաժնում ներառված գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված կողերից ձգվող ժապավենի առկայության պահանջը ներառվել է պատասխանատու ստորաբաժանման վրիպակի արդյունքում և ընդունելի է առանց տվյալ պահանջի:

Սակայն անհասկանալի է, թե ինչպես կարող է նշված վրիպակը առանց Հրավերում համապատասխան փոփոխություն կատարելու՝ ընդունվի Պատվիրատուի կողմից, եթե Ընթացակարգի արդյունքում գնման պայմանագիրը պետք է կնքվի նշված Հրավերի տեխնիկական բնութագրի պահանջների համապատասխան, իսկ ապրանքի ընդունումը իրականացվի՝ համաձայն Հրավերով և Պայմանագրով սահմանված պահանջների:

Միևնույն ժամանակ գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից վեր են հանվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի «Տեխնիկական բնութագրում» բազմաթիվ այլ խախտումներ և բացթողումներ, որի վերաբերյալ ՀՀ ՊՆ-ի կողմից գրությամբ որևէ առարկություն չի ներկայացվել, ինչը Ընկերությանը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք ընդունելի են համարվել Պատվիրատուի կողմից, մասնավորապես.

Չափաբաժին 1.2.–Կոշիկ ճտքավոր (զույգ).

«Տեխնիկական բնութագրով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար նախատեսված ապրանքի նկարագրում առկա են հետևյալ խնդիրները.

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Նախ, անհասկանալի պատճառով, մեկ միասնական տեխնիկական բնութագրում՝ մեկ չափաբաժնում, միավորվել են միանգամայն տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող երկու տարբեր գնման առարկաներ՝ երկու տեսակի ճտքավոր կոշիկներ՝ ձուլման եղանակով տակացուի ամրացման և բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման ճտքավոր կոշիկներ, ընդ որում, ճտքավոր կոշիկների առանձնահատկությունները չեն ավարտվում միայն տակացուի ամրացման եղանակով, այլ տարբեր են կոշիկների բոլոր պարամետրերը: Ստացվում է, որ մեկ չափաբաժնում միավորվել են երկու միանգամայն տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ, ընդ որում, նման տարբերությունը առաջացնում է նաև ապրանքի գնի տարբերություն: Բացի այդ, հնարավոր է, որ մասնակցի մոտ առկա տեխնալոգիաները իրեն հնարավորություն տան արտադրել առաջին մասում նշված ճտքավոր կոշիկը, իսկ մյուսին՝ միայն երկրորդը: Վերոհիշյալը ուղղակիորեն հակասում է Օրենքի 25-րդ հոդվածի պահանջներին:

Նույն հիմնավորմամբ անհասկանալի կերպով նույն միասնական տեխնիկական բնութագիր ունեցող ճտքավոր կոշիկները բաժանվել են երկու տարբեր չափաբաժինների՝ 1-ին և 2-րդ: Մինչդեռ, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասը արգելում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների:

Տեխնիկական բնութագրում նշված է. քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշին պետք է համապատասխանի ТУ 858-5966-2007 նորմերին, մինչդեռ նշված ТУ 858-5966-2007 հանդիսանում է «Русская кожа» ընկերության քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշվի արտադրության նորմ: Ուստի նշված «ТУ 858-5966-2007» հետ միաժամանակ Պատվիրատուի կողմից պետք է նշվեր «կամ համարժեք» բառերը՝ խտրական պահանջ չնախատեսելու և մրցակցությունը ապահովելու համար:

Հրավերում նախատեսված է հետևյալ վերացական արտահայտությունը՝ հետնամասը արտադրվում է կլոր ամորտիզատորով, ինչը կոշիկը դարձնում է ավելի ճկուն:Անհասկանալի է, թե «ավելի ճկուն» պահանջը ինչ չափանիշով պետք է գնահատել:

Հրավերում նախատեսված է, որ ճտքերը քուղավորվում են 8 կամ 9 զույգ մետաղական կոճականցքերով (կախված կոշիկի չափսից; թույլատրվում է նաև կեռիկների կիրառում): Անհասկանալի է, թե կոշիկի որ չափսից է թույլատրվում կոճականցքերի փոխարեն դնել կեռիկ (հրավերի նման պահանջի պայմաններում արտադրողը կարող է անգամ դնել զույգի մի կոշիկի վրա կոճականցք, իսկ մյուսի վրա՝ կեռիկ, քանզի արգելք չկա):

Հրավերով նշված է, որ երեսամասը միջատակի հետ կարակցված է սոսնձման և կարման եղանակով: Պետք է նշել, որ նշված կարակցման եղանակը կարող է լինել բացառապես այն դեպքում, երբ կոշիկը ունի ռանտ, սակայն ողջ տեխնիկական բնութագրի մեջ նման պահանջ առկա չէ, մինչդեռ առանց ռանտի կոշիկի դեպքում կարակցումը սոսնձման և կարման եղանակով անհասկանալի պահանջ է՝ գոյություն ունեցող կոշիկի արտադրման տեխնոլոգիաների առումով:

Հրավերով սահմանված է, որ արտաքին ներբանը պատրաստված է առաջնային ռետինե հումքից, մինչդեռ անհասկանալի է, թե ինչ է նշանակում «առաջնային ռետինե հումք» հասկացությունը: Պետք է նշել, որ ГОСТ 447-91-ով հստակ սահմանված է ներբանի նյութը՝ կաուչուկ:

Հրավերով սահմանված է, որ արտաքին ներբանի երկայնական կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 6մմ, սակայն որ հատվածից պետք է չափվի այդ հաստությունը՝ անհասկանալի է (արտաքին ներբանը ունի ռելյեֆ, և կախված ռելյեֆի կառուցվածքից՝ նրա տարբեր մասերը ունեն տարբեր հաստություններ):

Հրավերով սահմանված է անորոշ, վերացական հետևյալ պահանջ՝ միջնապատը ներդրված բարձրավուն հարմարավետությամբ, համապատասխան հումքից:

Ըստ էության, բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման կոշիկի դեպքում նկարագրված չէ կոշիկի տակացուն, ինչպես դա արված է այլ ապրանքների նկարագրերում: Ստացվում է, որ այս տեսակի կոշիկը ընդհանրապես չունի տակացու:

Հրավերով նախատեսվել է երկտող կարի ամրության աստիճանը երեսամասը ճտքերի հետ՝ 135 Ն/սմ, հետնամասը և հետնամասի արտաքին գոտին ճտքերի հետ՝ 135 Ն/սմ, կոշիկի վերնամասի և տակացուի միացման ամրության աստիճանը՝ ոչ պակաս, քան 90 Ն/սմ:

Անհասկանալի է, թե նշված պահանջները որտեղից է վերցրած, ինչ հիմնավորմամբ, և ապրանքը հանձնելիս, ինչպես կարելի է այս պարամետրի առկայությունը ստուգել (ՀՀ-ում նման փորձաքննություն չի իրականացվում):

Հրավերով նախատեսված միևնույն չափաբաժնի մեջ միավորված ձուլման եղանակով տակացուի ամրացման և բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման ճտքավոր կոշիկների ներդիրների միջև առկա է էական տարբերություն, որը էականորեն ազդում է ապրանքի գնի վրա. ձուլման եղանակով տակացուի ամրացման կոշիկի համար նախատեսվել է պահանջ՝ օրթոպեդիկ ներդիր, իսկ բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման ճտքավոր կոշիկների դեպքում՝ սովորական ներդիր:

Բացակայում է պահանջ՝ «Լեզվակի վրա վերին հատվածում արտաքին երեսին պետք է դաջված /накат/ լինի «Արտադրված է ՊՆ կարիքների համար, վաճառքն արգելվում է» տեքստը», ինչը օրինակ պահանջվում է կանացի կոշիկների դեպքում (3-րդ չափաբաժին), ինչը մեղմ ասած, անհասկանալի է:

Հրավերին կցված չէ 1 և 2 չափաբաժիններով նախատեսված ապրանքի արտաքին տեսքի նկարը:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 3. Կոշիկ ճտքավոր կանացի (զույգ).

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված կոշկերեսի երեսամասի, հետնամասի և արտաքին գոտիների, լեզվակը և ճտքերի հաստությունը չի համապատասխանում ГОСТ 19137-89 պահանջներին, քանի որ, նշված ԳOUS-ում առկա են բոլոր դետալների հաստությունները, մասնավորապես՝ երեսամասի, հետնամասի հաստությունը 1.8-2.2մմ, արտաքին գոտիները, լեզվակը և ճտքերը 1.2-1.5մմ: Բացի այդ

հրավերով սահմանված չեն միջատակի հումքի տեսակը և հատկանիշները, ինչը շատ կարևոր է կոշիկի որակական ցուցանիշների և ինքնարժեքի առումով:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 4. Կոշիկ՝ քրոմե (զույգ).

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Առկա է հղում հղում ГОСТ-447-91-ի վրա, սակայն ГОСТ-447-91-ում նման բնութագիր ունեցող կոշիկի ցուցանիշներ արտացոլված չեն, քանի որ տվյալ ԳOUS-ը նախատեսված է միայն երկարաճիտ, ճտքավոր և կիսաճտքավոր կոշիկների արտադրության համար:

Հրավերով նախատեսված է, որ կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդիրիր հետ կարման եղանակով, մինչդեռ նման տեխնոլոգիա գոյություն չունի և ակնհայտ անհասկանալի պահանջ է:

Տեխնիկական բութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որը էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի համար:

Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

Հրավերով սահմանված է, որ տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից է, սակայն բացակայում են «կամ համարժեք» բառերը:

Այս չափաբաժնով սահմանվում է, որ փաթեթավորումը պետք է լինի եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մինչդեռ մյուս բոլոր չափաբաժիններով դրվել է հնգաշերտի պահանջ:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 5. Կոշիկ՝ կարճաճիտ խրոմե /զույգ).

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Հրավերով նախատեսված է, որ կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդիրիր հետ կարման եղանակով, մինչդեռ նման տեխնոլոգիա գոյություն չունի և ակնհայտ անհասկանալի պահանջ է:

Տեխնիկական բնութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որն էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի առումով:

Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

Հրավերով սահմանված է, որ տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից է, սակայն բացակայում է «համարժեք» բառը:

Բացառապես այս չափաբաժնով սահմանվում է, որ փաթեթավորումը պետք է լինի եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մինչդեռ մյուս բոլոր չափաբաժիններով դրվել է հնգաշերտի պահանջ:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 6. Կոշիկ՝ խրոմե կանացի (զույգ).

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

Հրավերով սահմանված է, որ տակացուն պոլիուրետանից կամ երկշերտ պոլիուրետանից և տերմոպոլիուրետանից է, սակայն բացակայում է «կամ համարժեք» բառերը:

Բացառապես այս չափաբաժնով սահմանվում է, որ փաթեթավորումը պետք է լինի եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մինչդեռ մյուս բոլոր չափաբաժիններով դրվել է հնգաշերտի պահանջ:

Տեխնիկական բնութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որը էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի առումով:

Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Չափաբաժին 7. Հողաթափ՝ զորանոցային (զույգ).

Այստեղ առկա են հետևյալ խնդիրները.

Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

Հրավերով սահմանված է, որ հողաթափը արտադրվում է 39-46 չափսերի, սակայն հետագայում չափսերի սանդղակով չափսերը նշված են զույգերով՝ 39-40, 41-42, 43-44, 45-46: Նշված պահանջը կարող է թյուրիմացության մեջ գցել արտադրող ընկերությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ EVA նյութից արտադրված հողաթափերի շուկան շատ բազմազան է, անհրաժեշտ էր, որպեսզի ընդհանուր նկարագրի վերջում նշվեր «կամ համարժեք» բառերը:

Չկա նշում գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

-2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

-3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

-4-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

-5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց

դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է.

- Աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով.

- Միասնական տեխնիկական բնութագրում՝ մեկ չափաբաժնում խմբավորված են առանձին բնութագրեր ունեցող երկու տարբեր գնման առարկաներ՝ երկու տեսակի ճտքավոր կոշիկներ՝ ձուլման եղանակով տակացուի ամրացման և բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման ճտքավոր կոշիկներ:

- Հրավերով նախատեսված ապրանքի նկարագիրը չի համապատասխանում նույն Հրավերով սահմանված ГОСТ 447-91-ով նախատեսված պահանջներին: Մասնավորապես, Հրավերով ճտքավոր կոշիկի համար նշվել է տակացուի ամրացման ձուլման կամ բարձր ճնշման սոսնձման եղանակով տակացուի ամրացում, բարձրություն՝ 21-23 սմ, մինչդեռ ГОСТ 447-91-ում, որպես ամրացման եղանակ նշված են հետևյալ ձևերը՝ արույրե մեխերով տակացուի ամրացում, ռանտային ամրացում և ռանտասոսնձման եղանակով տակացուի ամրացում, բոլոր չափսերը նշվում են մմ, բացի այդ, ամենաբարձր կոշիկի՝ երկարաճիտ կոշիկի համար սահմանված մաքսիմալ բարձությունը՝ 160մմ է՝ 16 սմ, այլ ոչ թե՝ տեխնիկական բնութագրում նշված՝ 21-23 սմ:

- Տեխնիկական բնութագրում նշված է քրոմային դաբաղման հիդրոֆոբիկ կաշին պետք է համապատասխանի ТУ 858-5966-2007 տեխնիկական պայմաններին, որը հանդիսանում է «Русская кожа» ընկերության արտադրության նորմ: Նշված «ТУ 858-5966-2007» հետ միաժամանակ նշված չեն «կամ համարժեք» բառերը:

- Հրավերով սահմանվել է, որ կոշիկի արտաքին ներբանը պատրաստված է առաջնային ռետինե հումքից, ընդ որում, սահմանված չէ, թե ինչ է նշանակում «առաջնային ռետինե հումք» հասկացությունը: Մինչդեռ, ГОСТ 447-91-ով սահմանվել է ներբանի նյութը՝ կաուչուկ:

- Հրավերով սահմանվել է, որ արտաքին ներբանի երկայնական կտրվածքի հաստությունը պետք է լինի ոչ պակաս 6մմ, սակայն չի հստակեցվել, թե որ հատվածից պետք է չափվի այդ հաստությունը:

- Հրավերով նախատեսված միևնույն չափաբաժնի մեջ միավորված ձուլման ձուլման եղանակով տակացուի ամրացման կոշիկի համար նախատեսվել է պահանջ՝ օրթոպեդիկ ներդիր, իսկ բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով տակացուի ամրացման ճտքավոր կոշիկների դեպքում՝ սովորական ներդիր:

- Կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ սահմանված չէ:

- Աճուրդի 3-րդ չափաբաժնի մասով. /Կոշիկ ճտքավոր կանացի (զույգ)/.

- Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված մի շարք պարամետրեր՝ կոշկերեսի երեսամասի, հետնամասի և արտաքին գոտիների, լեզվակը և ճտքերի հաստությունը, չեն համապատասխանում ГОСТ 19137-89 պահանջներին:

- Հրավերով սահմանված չեն միջատակի հումքի տեսակը և հատկանիշները:

- Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն, հաստատված նմուշի նկարը առկա չէ հրավերում:

- Կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ սահմանված չէ:

- Աճուրդի 4-րդ չափաբաժնի մասով. /Կոշիկ՝ քրոմե (զույգ)/.

- Առկա է հղում ГОСТ-447-91-ին, սակայն ГОСТ-447-91-ում նման բնութագիր ունեցող կոշիկի ցուցանիշներ արտացոլված չեն, քանի որ տվյալ ГОСТ-447-91-ը նախատեսված է միայն երկարաճիտ, ճտքավոր և կիսաճտքավոր կոշիկների արտադրության համար:

-Տեխնիկական բութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որը էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի համար:

- Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

-Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

-Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

- Կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ սահմանված չէ:

- Աճուրդի 5-րդ չափաբաժնի մասով. /Կոշիկ՝ կարճաճիտ խրոմե /զույգ/.

-Հրավերով նախատեսված է, որ կոշիկի վերնամասը կարակցվում է հիմնական ներդիրիր հետ կարման եղանակով, մինչդեռ նման տեխնոլոգիա գոյություն չունի և ակնհայտ անհասկանալի պահանջ է:

-Տեխնիկական բնութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որն էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի առումով:

-Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

-Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

-Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

-Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

- Աճուրդի 6-րդ չափաբաժնի մասով. / Կոշիկ՝ խրոմե կանացի (զույգ)/.

-Նշված չէ խրոմե կաշվի հաստությունը, որից բաղկացած է վերնամասը, միջատակը, արտաքին ներբանը:

-Տեխնիկական բնութագրում բացակայում է հիմնական ներդիրի ներկայացվող պահանջները և հատկանիշները (հումքի տեսակը, հաստությունը), որը էական նշանակություն ունի կոշիկի որակի և ինքնարժեքի առումով:

-Տեխնիկական բնութագրում բացակայում է տակացուի ամրացման եղանակի մասին պահանջը:

-Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

-Չկա նշում կոշիկի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

- Աճուրդի 7-րդ չափաբաժնի մասով. / Հողաթափ՝ զորանոցաւին (զույգ).

-Հրավերով նախատեսված է, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Սակայն հաստատված նմուշի նկարը կցված չէ հրավերին:

-Հրավերով սահմանված է, որ հողաթափը արտադրվում է 39-46 չափսերի, սակայն հետագայում չափսերի սանդղակով չափսերը նշված են զույգերով՝ 39-40, 41-42, 43-44, 45-46: Նշված պահանջը կարող է թյուրիմացության մեջ գցել արտադրող ընկերությանը:

-Չկա նշում հողաթափի կամ դրա առանձին դետալների գույնի վերաբերյալ որևէ պահանջ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Պատվիրատուն չներկայացրեց որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պարամետրերին բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- Պատվիրատուն Հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինները որպես մեկ չափաբաժին խմբավորելով՝ խախտել է Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները,
- արձանագրված անհամապատասխանությունները չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ԱՐՑԱԽ ԿԱՐԻ-ԿՈՇԻԿԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 25.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չկայացած հայտարարելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ